«Ի ժամանակս Մեծին Կոստանդիանոսի իբրև ի յայտ եկին մարմինք Նոցա . . . ետ թաղել ի վայելուչ տեղւոջ։»

«Բայց այս եղիցի ի ժամանակս յետինս, յորժամ յայտնեսցին նշխարք սրբոց Սուքիասանց քօշիցն, զորս ես (Մեծն Կոստանդիանոս) ամփոփեցի առաջնորդութեամբ հրեշտակի տեառն ի Բագրեւանդ գաւառի . . . »։

«Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր գնացեալ անդ ի Սուկաւէտ լեառն շինեաց եկեղեցիս ի տեղի վկայութեան Սուքիասանց քօշից, և կարգեաց անդէն զդասս կրօնաւորաց»։

«Ի վայելուչ տեղւոջ՝» ասուած խօսքից կերևի որ յարմար վայր մի ամփոփած են Սրբոց նշխարներն սակայն այս կողերու վրայ ո և է յարմար վայր չը կայ, բացի վերոյ ասուած վայրից, որ ոմանք վրանաբնակ քրդերու դերեզմաններ կը կարծեն։

«Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր . . . շինեաց եկեղեցիս ի տեղի վկայութեան . . . կարգեաց անդէն զդասս կրօնաւորաց» խօսքերից ևս կերևի որ վկայութեան վայրը եկեղեցի շինուած է որ հետքն անգամ չերևիր, բացի ½ ժամ յարևմուտս հարաւ գտնուած Աւզրաւայ ձորի մէջ Ջեռկանայ Կարմիր կամ Լուսաւորչայ մատուռից, որ ունի հնութեան հետքեր, վայելուչ տեղ շինուած, միաբանութեան սենեակներ, որպէս Ջեռկան գիւղի տեղագրութեան մէջ մասնաւոր ինչ խօսուած է։

Այս վայրը որչափ որ պատմագրոց վկայութեան յարմար կգայ, բայց բոլորովին խուլ ձորակի մի մէջ լինելն ինձ կարծել կըտայ՝ թէ Ս. Լուսաւորիչ շինած է, երկիւղ կրելով կռապաշտութիւնից այս առանձնութիւնը յարմար վայր ընտրած և Սրբոց նշխարներն անդ ամփոփած և շինած է եկեղեցի։

Քանի տարիներ առաջ Խոփուզ գիւղն, որ Սրբոցս